

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ
ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՅՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԼՍՎՔ ՔՀԾՁԲ-20/21»

ք. Վանաձոր

«19» 02 2020թ.

«Վանաձորի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՌԹՍՈՐՍ»ՄՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Արմեն Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր քաղաքի սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված

ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 487 000 (ինը միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²² Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևերի բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ

որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232514027
ՀՎՀՀ 06901936



Մ. Աղայան
(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Աուրորա» ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
Բանկ Հայեկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163007079839
ՀՎՀՀ 02639627
գլխավոր տնօրեն
Ա. Սարգսյան



(ստորագրություն)

Վ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	92621110/1	Վանաձոր քաղաքի սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ ի-տես ներքևում*	դրամ	9487000	1	Ըստ պահանջի	Պայմանագրի կնքման պահիս 25.12.2020թ.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պլանավորված ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

*** <<ԼՈՌՎԱ ԶՄԵՈ-2020>> 49-ԸՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՏՈՆԱՀԱՆՂԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. Լրատվական միջոցներով տեղեկացնել քաղաքի ազգաբնակչությանը մարզատոնահանդեսի անցկացման մասին^ա փակցնելով ազդագրեր, լրզունգներ:
2. Ստեղծել հանձնաժողով համայնքի ղեկավարի նախագահությամբ, ընդգրկել տեղակալներ և 16 անդամ:
3. Բոլոր մարզաձևերից մրցումներն անցկացնելու համար նշանակել մրցավարներ :
4. Ապահովել ավտոաշտարակով / 2օր/ քաղաքում լրզունգներ փակցնելու և հանելու համար:
5. Ապահովել գրեյդերով՝ 2 օր շուտ մարզատոնահանդեսի հարակից տարածքները և ճանապարհները նախապատրաստելու համար:
6. Ապահովել բանվորով /8 մարդ՝3 օր/, Թեժ լեռան հովիտը դրոշներով, լրզունգներով և փուչիկներով ձևավորելու և զարդարելու համար :
7. Տրամադրել ավտոբուս /10 հատ/, միկրոավտոբուս /20 հատ/, որոնք բնակչությանն անվճար կտեղափոխեն Թեժ լեռան հովիտ և հովտից քաղաք (յուրաքանչյուրը 4 երթ), խիստ հսկողություն սահմանել նրանց աշխատանքին:
8. Տրամադրել միկրոբեռնատար /2 օր, 4 երթ/ անհրաժեշտ գույքը և սննդամթերքը Թեժ լեռան հովիտ տեղափոխելու համար:
9. Ձեռք բերել ազդագիր՝ գունավոր, A3 ֆորմատի <<Լոռվա-ձմեռ>> մարզատոնահանդեսի ծրագրով /200 հատ/, հրավիրատուն՝ գունավոր մարզատոնահանդեսի նախշանկարներով /50 հատ/, պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /60հատ/, շնորհակալագիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /40 հատ/:

10. Ձեռք բերել կտորե փոքր դրոշների շարան /300 մետր/, մեծ դրոշների շարան՝ 0.6x0,8մ չափի /200 մետր/:
11. Ձեռք բերել բեմահարթակի գորգ /50քմ/, գեներատոր /1 հատ/ 3.5կվտ հզորությամբ, արտադրությունը Չինաստան կամ համարժեք, կրակայրիչ ճամփորդական 5կգ տարողությամբ /3 հատ/, կաթսա այլումինե 20լ տարողությամբ /2 հատ/, սրճեփ/ջազվ/ այլումինե 0.5լ տարողությամբ/1 հատ/:
12. Ձեռք բերել պոլիէթիլենե գունավոր լոգունգ 0.7x3մ չափի /3 հատ/ միակողմանի տպագրությամբ:
13. Ձեռք բերել պոլիէթիլենե գունավոր լոգունգ 0.7x8մ չափի /1 հատ/ երկկողմանի տպագրությամբ՝ քաղաքում գովազդելու համար:
14. Ձեռք բերել եռագույն դրոշներ պոչով՝ 0.7x1.5մ չափի /5 հատ/, օլիմպիական դրոշ պոչով 0.7x1.5մ չափի /5 հատ/, փուչիկ /200 հատ/՝ Թեժ լեռան հովիտը զարդարելու համար:
15. Հրավիրել մուլտիերոսներ /5 մարդ , 3 ժամ /:
16. Ձեռք բերել փուչիկների փունջ <<Լոռվա ձմեռ>> գրությամբ՝ օդ բարձրացնելու համար/ 1 փունջ/:
17. Ձեռք բերել մանկական փափուկ խաղալիք /20 հատ/, պատի նկար յուղաներկով /10 հատ/, գավաթ մետաղյա /23 հատ/, դահուկ /1 գույգ/, այլումինե սահնակ /1 հատ/՝ ըստ մարզաձևերի հաղթողներին պարգևատրելու համար:
18. Ձեռք բերել մանկական փափուկ խաղալիք ամենափոքր մասնակիցների համար /2 հատ/:
19. Ձեռք բերել բջջային հեռախոս՝ հատուկ մրցանակի համար /2 հատ/:
20. Ձեռք բերել պարկ՝ 0.7x 1.2 մ չափի քաթանե կտորից /2 հատ/:
21. Ձեռք բերել խարույկի փայտ /2մ³/, վառելանյութ բենզին՝ գեներատորի համար, ռեգուլյար արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91 /100 լիտր/, դիզ. վառելիք՝ ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը 150 C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ³ /20 լիտր/, հեղուկ գազ /15կգ/:
22. Ձեռք բերել շինարարական մեխ՝ 60մմ-ից 120մմ չափսերի /2.0 կգ/, ձողափայտ 80սմ երկար.5սմ տրամագծով /50 հատ/, պարան սինթետիկ /300մ/, պարան սինթետիկ 8 մետրանոց /10կապ/ մուրճ շինարարական /2 հատ/:
23. Ձեռք բերել սուսինձ՝ չոր, գրասենյակային թուղթ սուսնձելու համար /10 հատ/, սկոչ /20 հատ/, գրիչ՝ գնդիկավոր /20 հատ/, տետր 12 թերթանոց /20 հատ/:
24. Ձեռք բերել վոլեյբոլի ցանց երկարությունը՝ 9.5մ, լայնությունը՝ 1մ, գործվածքի բջջի չափսը /Box/100 x 100 մմ, գործվածքի հումքը՝ պոլիպրոպիլեն/1 հատ/, վոլեյբոլի գնդակ արհեստական կաշվից, N5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, բազմերանգ գունավորմամբ /2 հատ/, ֆուտբոլի գնդակ արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ /2 հատ/, շախմատի կոմպլեկտ պատրաստված ռետինե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանջված և թվանջված մրցումային ստանդարտներին համապատասխան, պլաստմասե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ) /8 հատ/, մազլցման պարան՝ բամբակի և

կապրոնի համակցությունից, 6 սմ տրամագծով, 4.5-4.6 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան:

25. Ձեռք բերել թեյ միանգամյա օգտագործման՝ միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված 2, 2,5 և 3գ փաթեթներով /35 տուփ/, սուրճ՝ բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տափպ և այլն/1.0կգ/, շաքարավազ՝ սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի /15 կգ/, կոնֆետ կարամել՝ կարամելակաթնային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլածային, պրալինե հավելանյութերով /20կգ/, բաժակներ և գդալեր միանգամյա օգտագործման /1500 հատ/:
26. Կազմակերպել հյուրասիրություն ռեստորանային համալիրում(100 մարդ):
27. Ապահովել սննդի օբյեկտների առկայությունը:
28. Ապահովել ձայնային ապարատուրա՝1 կվտ հզորությամբ, խոսափողով և սպասարկող անձնակազմով:
29. Ապահովել հաղորդավարի ծառայությունը:
30. Ապահովել ոստիկանության աշխատակիցների ծառայությունը:
31. Ապահովել <<Շտապ օգնության>> ծառայության 1 անձնակազմ/3 ժամ/:
32. Ապահովել հրշեջ փրկարարների ծառայությունը:
33. Ապահովել ճանապարհային ոստիկանության աշխատակիցների ծառայությունը:
34. Ապահովել պարային համույթների /3 համույթ/, անհատ կատարողների /3 մարդ/, ազգային նվագախմբի /1 խումբ/, մարզատնահանդեսի հաղորդավարի /1 մարդ/, կրկեսային արտիստների /լարախաղացների/ /1 խումբ/ առկայությունը:
35. Կազմակերպել հրավառություն /10 հատ/:
36. Կատարել տեսա և լուսանկարահանում, լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

<<ԼՈՌՎԱ ՉՄԵՌ-2020>> 49-ԸՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՏՈՆԱՀԱՆԴԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ե Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

N	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Ազդագիր /գուն./	200 հատ	
2.	Հրավիրատոմս /գուն./	50 հատ	
3.	Պատվոգիր /գուն./	60 հատ	
4.	Շնորհակալագիր /գուն./	40 հատ	
5.	Գավաթ	23 հատ	
6.	Դահուկ	1 զույգ	
7.	Սահնակ	1 հատ	
8.	Հատուկ մրցանակ /բջջային հեռախոս/	2 հատ	
9.	Նկար պատի	10 հատ	
10.	Հատուկ մրցանակ ամենափոքր մասնակցի համար /տղա և աղջիկ/ փափուկ խաղալիք	2 հատ	

11.	Մանկական փափուկ խաղալիք	20 հատ	
12.	Մեծ դրոշների շարան /60x80սմ/	200մ	
13.	Փոքր դրոշների շարան	300 մ	
14.	Պարան սինթետիկ	300մ	
15.	Պարան սինթետիկ Ցմետրանոց	10 կապ	
16.	Խարույկի փայտ	2 մ ³	
17.	Մեխ շինարարական	2.0 կգ	
18.	Զոդափայտ 80սմ երկար. 5սմ տրամագծով	50 հատ	
19.	Մուրճ	2 հատ	
20.	Եռագույն դրոշ պոչով /0.7x 1.5 մ չափի/	5 հատ	
21.	Օլիմպիական դրոշ պոչով /0.7x 1.5 մ չափի/	5 հատ	
22.	Լոզունգ /0.7x 3 մ չափի/	3 հատ	
23.	Լոզունգ պոլիէթիլենե գունավոր, երկկողմանի տպագրությամբ քաղաքում գովազդելու համար /0.7x 8 մ չափի/	1 հատ	
24.	Բեմահարթակի գորգ	50քմ	
25.	Գեներատոր	1 հատ	
26.	Պարկ կտորե /0.7x 1.2 մ չափի/	2 հատ	
27.	Փուչիկների փունջ <<Լոռվա ձմեռ>> գրությամբ օդ բարձրացնելու համար	1 փունջ	
28.	Մուլտիեքոսներ	5մարդ x 3 ժամ	
29.	Ավտոաշտարակ (2 օր)	1 հատ	
30.	Միկրոբեռնատար	4 երթ x 2օր	
31.	Ավտոբուս	10 հատ	
32.	Միկրոավտոբուս	20 հատ	
33.	Գրեյդեր	2 օր	
34.	Զայնային սպարատուրա և սպասարկող անձնակազմ	1 հատ	
35.	Ազգային նվագախումբ	1 խումբ	
36.	Մարզատոնահանդեսի հաղորդավարի ծառայություն	1 մարդ	
37.	Կրկեսային արտիստ/չարախաղաց/	1 խումբ	
38.	Բանվոր	8 մարդ x 3օր	
39.	Փուչիկ	200 հատ	
40.	Տեսր /12 թերթանոց/	20 հատ	
41.	Գրիչ	20 հատ	
42.	Մուսինձ	10 հատ	
43.	Սկոչ	20 հատ	
44.	Հրավառություն	10 հատ	
45.	Վառելանյութ բենզին գեներատորի համար	50 լիտր	
46.	Դիզ. վառելիք	20 լիտր	
47.	Հեղուկ գազ	15 կգ	

48.	Գազայրիչ ճամփորդական /5կգ/	3 հատ	
49.	Կաթսա /20լ/	2 հատ	
50.	Սրճեփ /ջազվա/	2 հատ	
51.	Թեյ միանգամյա օգտագործման	35 տուփ	
52.	Սուրճ	1.0 կգ	
53.	Շաքարավազ	15 կգ	
54.	Կոնֆետ /կարամել/	20 կգ	
55.	Անձեռոցիկ	15 տուփ	
56.	Բաժակներ և գդալներ միանգամյա օգտ.	1500 հատ	
57.	Վոլեյբոլի ցանց	1 հատ	
58.	Վոլեյբոլի գնդակ	2 հատ	
59.	Ֆուտբոլի գնդակ	2 հատ	
60.	Շախմատի կոնսյուեկտ	8 հատ	
61.	Մազլցման պարան	1 հատ	
62.	Հյուրասիրություն ռեստորանային համալիրում	100 մարդ	
63.	Շտապ օգնության ծառայություն /3 ժամ/	1 անձնակազմ	
64.	Տեսանկարահանում և տեսանյութի պատրաստում		
Ընդամենը			

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՏՉԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. Տեղեկացնել քաղաքի ֆուտզալի գավաթի խաղարկության անցկացման մասին:
2. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
3. Ձևավորել մրցավարական կազմ:
4. Առաջնությունն սկսելուց 3 օր առաջ կատարել նախօրոք հայտ ներկայացրած թիմերի վիճակահանություն և բոլոր թիմերին ըստ ենթախմբերի տրամադրել խաղացանկ:
5. Միջոցառումն անցկացնելու համար ձեռք բերել ֆուտզալի գնդակ (3 հատ):
6. Ձեռք բերել դեղորայքի արկղիկ (1 հատ)՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
7. Հաղթող և մրցանակակիր թիմերին պարգևատրելու համար ձեռք բերել սպորտային թիթեղյա գավաթ՝ 68սմ, 48սմ և 43սմ բարձրությամբ (3 հատ), պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (39 հատ) և մեդալ՝ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (36 հատ):
8. Գավաթի խաղարկության ընթացքում լավագույն դարպասապահ, պաշտպան, կիսապաշտպան, ուրարկու, հարձակվող ճանաչված ֆուտբոլիստներին պարգևատրելու համար ձեռք բերել ֆուտբոլային արձանիկ (5 հատ) և պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
9. Ձեռք բերել շնորհակալագիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):

10. Գլխավոր մրցավարին վճարել (15000 դրամ), մրցավարներին՝ (100000 դրամ), քարտուղարին՝ (10000 դրամ), բուժքրոջը՝ (5000 դրամ):
11. Գավաթի խաղարկության ընթացքում ապահովել ուստիկանության աշխատակիցների ներկայությունը՝ անվտանգությունն ապահովելու համար:
12. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՏՉԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ն Ա Ն Ա Հ Ա Շ Ի Վ**

	<i>Անվանումը</i>	<i>Քանակը</i>	<i>Գումարը /դրամ/</i>
1.	Գավաթ սպորտային թիթեղյա առաջին տեղ զբաղված թիմի համար	1 հատ	
2.	Գավաթ սպորտային թիթեղյա երկրորդ տեղ զբաղված թիմի համար	1 հատ	
3.	Գավաթ սպորտային թիթեղյա երրորդ տեղ զբաղված թիմի համար	1 հատ	
4.	Ֆուտբոլային արձանիկ լավագույն 5 խաղացողներին	5 հատ	
5.	Գնդակ ֆուտզայի	3 հատ	
6.	Մեդալ	36 հատ	
7.	Պատվոգիր /գուն./	44 հատ	
8.	Շնորհակալագիր/գուն./	5 հատ	
9.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	
10.	Գլխավոր մրցավարին վճարման գումար	1 մարդ	
11.	Մրցավարներին վճարման գումար		
12.	Քարտուղարին վճարման գումար	1 մարդ	
13.	Բուժքույրին վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

**ՄԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. Տեղեկացնել սեղանի թենիսի քաղաքի առաջնության անցկացման մասին:
2. 1 ամիս շուտ բաժանել կանոնադրությունները՝ թիմեր ներկայացնող կազմակերպություններին:
3. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
4. Ձևավորել մրցավարական կազմ:

5. Առաջնությունն սկսելուց 3 օր առաջ կատարել նախօրոք հայտ ներկայացրած թիմերի վիճակահանություն և բոլոր թիմերին ըստ ենթախմբերի տրամադրել խաղացանկ:
6. Հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (18 հատ), մեդալ՝ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (18 հատ), սպորտային գավաթ (5 հատ):
7. Ձեռք բերել շնորհակալագիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (10 հատ):
8. Ձեռք բերել սեղանի թենիսի գնդակ (50 հատ), դեղորայքի արկղիկ (1 հատ)՝ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
9. Գլխավոր մրցավարին՝ վճարել (10000 դրամ), 5 մրցավարին՝ (25000 դրամ), բուժքրոջը՝ (5000 դրամ), քարտուղարին՝ (5000 դրամ) :
10. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

**ՄԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՎԱՆԱՉՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ն Ա Ռ Ա Հ Ա Շ Ի Վ**

№	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Թենիսի գնդակ	50 ատ	
2.	Սպորտային գավաթ	5 հատ	
3.	Շնորհակալագիր /գուն./	10 ատ	
4.	Պատվոգիր /գուն./	18 հատ	
5.	Մեդալ	18 հատ	
6.	Գլխավոր մրցավարին վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարներին վճարման գումար	5 մարդ	
8.	Քարտուղարի վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքրոջ վճարման գումար	1 մարդ	
10.	Տեխնիկական աշխատողի վճարման գումար	1 մարդ	
11.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	
Ընդամենը			

ՎԱՆԱՉՈՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3 և 4-7 ՊԱՍԱՐԱՆՆԵՐԻ

<<ՄՊՈՐՏԼԱՆԴԻԱ-2020>> ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Տեղեկացնել հանրակրթական դպրոցների տնօրեններին՝ 1-3 և 4-7 դասարանների սպորտլանդիայի անցկացման մասին:
2. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
3. Ձևավորել մրցավարական կազմ և ժյուրի:

4. Ձեռք բերել պլաստմասե օղակ 25x30սմ չափի /10 հատ/, մարմնամարզական մեծ օղակ /10 հատ/, ներքնակ՝ արհեստական կաշվե ծածկույթով, լայնությունը 1մ, երկարությունը 2մ, 4-5սմ հաստությամբ սպունգի խտությունը 22 կգ/մ3 միջուկով ներքնակ, 2% թույլատրելի շեղումով:
5. Ձեռք բերել երկանիվ մանկական հեծանիվ /2 հատ/:
6. Ձեռք բերել վահանակ 110x65սմ 65սմ բարձրությամբ կանգնակով /2հատ/, վահանակ 2.5մ x40սմ 1մ բարձրությամբ կանգնակով /2հատ/, պարկ 3 մ երկարությամբ 1մ տրամագծով /2 հատ/, բասկետբոլի գնդակ №5 արհեստական կաշվից /2 հատ/:
7. Ձեռք բերել կանգնակ(գուրգ) 30-50սմ բարձրության /10 հատ/, գնդակ մեծ /2 հատ/, փայտյա արգելք՝ 90սմ բարձրությամբ, 1.2մ երկարությամբ / 2 հատ/:
8. Հաղթող և մրցանակակիր թիմերին պարգևատրելու համար ձեռք բերել սպորտային թիթեղյա գավաթ 43սմ, 41սմ և 39սմ բարձրությամբ /6 հատ/ և պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /66 հատ/:
9. Ձեռք բերել շնորհակալագիր՝ գունավոր A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով /10 հատ/:
1. Ձեռք բերել դեղորայքի արկղիկ / 2 հատ/ անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
10. Գլխավոր մրցավարին վճարել (2 մարդ)20000 դրամ, մրցավարներին (6 մարդ), 60000 դրամ, քարտուղարին (2 մարդ) 10000 դրամ, բուժքրոջը (2 մարդ) 10000 դրամ:
11. Լրատվական միջոցներով լուսաբանել սպորտլանդիայի ընթացքը և փակման արարողությունը:

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3 և 4-7 ԴԱՍՏԱՐԱՆԵՐԻ
 <<ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ -2020>> ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
 Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

№	Անվանումը	Քանակը	Գումար ը /դրամ/
1.	Օղակ փոքր 25x30սմ	10 հատ	
2.	Օղակ մեծ մարմնամարզական	10 հատ	
3.	Ներքնակ	2 հատ	
4.	Երկանիվ մանկական հեծանիվ	2 հատ	
5.	Վահանակ 110x65սմ 65սմ բարձր. կանգնակով /Օլիմպիական/	2 հատ	
6.	Վահանակ 2.5մx40սմ 1մ բարձր. կանգնակով /Հաղթանակ/	2 հատ	
7.	Պարկ 3մ երկար. 1մ տրամագծով	2 հատ	
8.	Բասկետբոլի գնդակ	2 հատ	
9.	Պատվոգիր /գուն./	66 հատ	
10.	Շնորհակալագիր /գուն./	10 հատ	
11.	Գավաթ սպորտային թիթեղյա 1 տեղ գրաված թիմերի համար	2 հատ	
12.	Գավաթ սպորտային թիթեղյա 2-րդ տեղ գրաված թիմերի համար	2 հատ	

13.	Գավաթ սպորտային թիթեղյա 3-րդ տեղ գրաված թիմերի համար	2 հատ	
14.	Փայտյա արգելք /90սմ բարձր. 1մ երկար. /	2 հատ	
15.	Կանգնակ/ գուրգ/ 30-50սմ բարձր.	10 հատ	
16.	Շարժական կամրջակ փայտյա 1.1*0.75մ	2 հատ	
17.	Գնդակ/մեծ/	2 հատ	
18.	Գլխավոր մրցավարի վճարման գումար	2 մարդ	
19.	Մրցավարներին վճարման գումար	6 մարդ	
20.	Բուժքույրի վճարման գումար	2 մարդ	
21.	Քարտուղարին վճարման գումար	2 մարդ	
22.	Դեղորայքի արկղիկ	2 հատ	
Ընդամենը			

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- Տեղեկացնել քաղաքի ծանրամարտի առաջնության անցկացման մասին:
- Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
- Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
- Ըստ քառյակ կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (57 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (57 հատ), հաղթողներին պարգևատրելու համար մարզական գավաթ (19 հատ):
- Գլխավոր մրցավարին (1 մարդ) վճարել 10000 դրամ, մրցավարներին (5 մարդ)՝ 25000 դրամ, քարտուղարին (1 մարդ) 5000 դրամ, բուժքույրին՝ (1 մարդ) 5000 դրամ:
- Ձեռք բերել դեղորայքի արկղիկ (1 հատ) անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
- Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
- Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ (ՏՂԱՆԵՐԻ և ԱՂՋԻԿՆԵՐԻ) ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ն Ա Ռ Ա Հ Ա Շ Ի Վ

Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
------------------	---------------	---------------------------

1.	Մարզական գավաթ	19 հատ	
2.	Մեդալ	57 հատ	
3.	Շնորհակալագիր /գուն./	5 հատ	
4.	Պատվոգիր /գուն./	57 հատ	
5.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	
6.	Գլխավոր մրցավարների վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարների վճարման գումար	5 մարդ	
8.	Քարտուղարների վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքույրերի վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- Տեղեկացնել քաղաքի բոնցքամարտի առաջնության անցկացման մասին:
- Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
- Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
- Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (68 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (68 հատ), հաղթողներին պարգևատրելու համար սպորտային գավաթներ (17 հատ):
- Գլխավոր մրցավարին (1 մարդ) վճարել 10000 դրամ, մրցավարներին (5 մարդ)՝ 25000 դրամ, քարտուղարին (1 մարդ) 5000 դրամ, բուժքույրին՝ (1 մարդ) 5000 դրամ:
- Ձեռք բերել դեղորայքի արկղիկ (1 հատ), անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
- Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
- Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնության ընթացքը և փակման արարողությունը:

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ն Ա Ն Ա Հ Ա Շ Ի Վ

	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Սպորտային գավաթներ ըստ քաշային կարգի հաղթողներին	17 հատ	
2.	Մեդալ	68 հատ	

3.	Պատվոգիր /գուն./	68 հատ	
4.	Շնորհակալագիր /գուն./	5 հատ	
5.	Ղեղորայքի արկղիկ	1 հատ	
6.	Գլխավոր մրցավարի վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարների վճարման գումար	5 մարդ	
8.	Քարտուղարի վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

**ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏ ԸՄԲԵՇԱՍՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԾՐԱԳԻՐ**

- Տեղեկացնել քաղաքի ազատ ըմբշամարտի առաջնության անցկացման մասին:
- Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
- Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
- Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (40 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (40 հատ), հաղթողներին պարգևատրելու համար մարզական գավաթ (10 հատ):
- Գլխավոր մրցավարին (1 մարդ) վճարել 10000 դրամ, մրցավարներին (6 մարդ)՝ 30000 դրամ, քարտուղարին (1 մարդ) 5000 դրամ, բուժքույրին՝ (1 մարդ) 5000 դրամ:
- Ձեռք բերել ղեղորայքի արկղիկ (1 հատ), անհրաժեշտ ղեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
- Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
- Լրատվամիջոցներով լուսարանել առաջնության ընթացքը և փակման արարողությունը:

**ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏ ԸՄԲԵՇԱՍՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Մարզական գավաթ ըստ քաշային կարգի հաղթողներին	10 հատ	
2.	Մեդալ	40 հատ	
3.	Պատվոգիր /գուն./	40 հատ	

4.	Շնորհակալագիր /գուն./	5 հատ	
5.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	
6.	Գլխավոր մրցավարի վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարների վճարման գումար	6 մարդ	
8.	Քարտուղարի վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԲՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԾՐԱԳԻՐ**

- Տեղեկացնել քաղաքի սամբոյի առաջնության անցկացման մասին:
- Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
- Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
- Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (40 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (40 հատ), հաղթողներին պարգևատրելու համար սպորտային գավաթներ (10 հատ):
- Գլխավոր մրցավարին (1 մարդ) վճարել 10000 դրամ, մրցավարներին (6 մարդ)՝ 30000 դրամ, քարտուղարին (1 մարդ) 5000 դրամ, բուժքույրին՝ (1 մարդ) 5000 դրամ:
- Ձեռք բերել դեղորայքի արկղիկ (1 հատ), անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
- Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
- Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԲՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Սպորտային գավաթ ըստ քաշային կարգի հաղթողներին	10 հատ	
2.	Մեդալ	40 հատ	
3.	Պատվոգիր /գուն./	40 հատ	
4.	Շնորհակալագիր /գուն./	5 հատ	
5.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	

6.	Գլխավոր մրցավարի վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարների վճարման գումար	6 մարդ	
8.	Քարտուղարի վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՅՈՒԴՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Տեղեկացնել քաղաքի ձյուդոյի առաջնության անցկացման մասին:
2. Կազմել մրցման կանոնադրություն, հաստատել համայնքի ղեկավարի կողմից և բաժանել քաղաքի մարզական կազմակերպություններին:
3. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
4. Ըստ քաշային կարգի հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրելու համար ձեռք բերել պատվոգիր՝ գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (40 հատ), մեդալ ոսկե, արծաթե, բրոնզե գույների (40 հատ), հաղթողներին պարգևատրելու համար սպորտային գավաթներ (10 հատ):
5. Գլխավոր մրցավարին (1 մարդ) վճարել 10000 դրամ, մրցավարներին (6 մարդ)՝ 30000 դրամ, քարտուղարին (1 մարդ) 5000 դրամ, բուժքույրին՝ (1 մարդ) 5000 դրամ:
6. Ձեռք բերել դեղորայքի արկղիկ (1 հատ), անհրաժեշտ դեղորայքով, այդ թվում սառեցնող և ցավազրկող:
7. Ձեռք բերել շնորհակալագիր գունավոր, A4 ֆորմատի, սպորտային նախշանկարներով (5 հատ):
8. Լրատվամիջոցներով լուսաբանել առաջնությունը:

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՅՈՒԴՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Ն Ա Ն Ա Շ Ր Վ

	Անվանումը	Քանակը	Գումարը /դրամ/
1.	Սպորտային գավաթ ըստ քաշային կարգի հաղթողներին	10 հատ	
2.	Մեդալ	40 հատ	
3.	Պատվոգիր /գուն./	40 հատ	
4.	Շնորհակալագիր /գուն./	5 հատ	
5.	Դեղորայքի արկղիկ	1 հատ	
6.	Գլխավոր մրցավարի վճարման գումար	1 մարդ	
7.	Մրցավարների վճարման գումար	6 մարդ	

8.	Քարտուղարի վճարման գումար	1 մարդ	
9.	Բուժքույրի վճարման գումար	1 մարդ	
Ընդամենը			

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. 1 ամիս շուտ բաժանել կանոնադրությունները թիմեր ներկայացնող կազմակերպություններին:
2. Միջոցառումն անցկացնել մասնագիտացված մարզատարածքում՝ ապահովելով կանոնակարգային պահանջներից բխող պայմաններ:
3. Ձևավորել մրցավարական կազմ:
